ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1382 01.11.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ

գեներալ-լեյտանենտ

պարոն. Վ.Գասպարյանին

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՏՊ № 4664
04 11 2013 թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

«Ոստիկանություն
Մտից թիվ 7396
04 11 2013 թ.

Դիտորդական խումբը 24.10.2013թ-ին այցելել է Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ: Այցելության արդյունքում Դիտորդական խումբը արձանագրել է, որ 12.06.2013թ-ից մինչ 24.10.2013թ. ՁՊՎ մուտք են գործել 251 ձերբակալված անձիք, որոնցից 101 ձերբակալվածի մոտ արձանագրվել է մարմնական վնասվածքներ, դրանցից առանձնացվել է 28 ձերբակալված, որտեղ ավելի մեծ է հավանականությունը, որ մարմնական վնասվածքները պատճառվել է խոշտանգման արդյունքում:

Մասնավորապես՝ Գևորգյան Նիկոլայ Սամվելի, Այվազյան Վահան Խաչիկի, Հարությունյան Գոռ Վլադիմիրի, Մովսիսյան Սերգեյ Գագիկի, Նիկալաիա Լիդա Ռուդիկի, Նազարյան Գեղամ Գագիկի, Համբարձումյան Տիգրան Հովհաննեսի, Հարությունյան Հրանտ Հարությունի, Միլիտոնյան Լևոն Ռուբիկի, Առաքելյան Սերյոժա Վաղինակի, Սարգսյան Հարություն Հարությունի, Գալստյան Քերոբ Ռաֆաելի, Վարդանյան Ալբերտ Վարդանի, Պետրոսյան Զավեն Ռուբենի, Վարդանյան Գեղեցիկ Հակոբի, Թամոյնա պետրոս Տիգրանի, Զարոյան Սուրեն Ռոբերտի, Տատարոգուլոն Քրիստինե Միխայելի, Բաբայան Սարգիս Գուրգենի, Հարությունյան Գագիկ Ժորժիկի, Պապոյան Գագիկ Սերգեյի, Աղաջանյան Վահան Հովհաննեսի, Պետրոսյան Գագիկ Լյովայի, Կարապետյան Կարո Կառլենի, Ազատյան Արմեն

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Անդրեասի, Հայրապետյան Գրիգոր Գագիկի, Խաչատրյան Լաուրա Միքայելի մոտ արձանագրվել են տարբեր բնույթի մարմնական վնասվածքներ:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք, տրամադրել տեղեկատվություն թե.

- ՀՊՎ-ում արձանագրված 101 մարմնական վնասվածքների կապակցությամբ, քանի դեպքով է քրեական գործ հարուցվել, (խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն արդյունքների վերաբերյալ, եթե հարուցվել է քրեական գործ)
- քանիսով՝ մերժվել (խնդրում ենք ներկայացնել մերժման հիմքերը)
- Քանի պաշտոնատար անձ է ենթարկվել պատասխանատվության
- Խնդրում ենք առանձին-առանձին տեղեկատվություն տրամադրել, թե վերը թվարկված 28 ձերբակալված անձանց մարմնական վնասվածք ստանալու պատճառների բացահայտման ուղղությամբ ինչ աշխատանքներ են տարվել: Քանի դեպքով է հարուցվել քրեական գործ կամ մերժվել (խնդրում ենք նշել մերժման հիմքերը և պատճառաբանությունը):

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

N- 2/2-1- 3413 «02» 12 2013թ.

Ձեր՝ 01.11.2013թ. թիվ 2621/1382 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Ձեր 01.11.2013թ. 2621/1382 գրությունը քննարկվել է ՀՀ ոստիկանության շտաբում, քննչական գլխավոր և Երևան քաղաքի վարչություններում:

Ստացված գրության մեջ նշված են ոչ թե 28, այլ 27 ձերբակալվածների վերաբերյալ տվյալներ /1 անձի վերաբերյալ տեղեկատվության առկայության դեպքում խնդրվում է տրամադրել լրացուցիչ/:

Գրության մեջ նշված թվով 27 անձանց մոտ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ ընդունվելու պահին առկա մարմնական վնասվածքների կապակցությամբ ուղարկված իրազեկումներից քննչական գլխավոր վարչության տարածքային ստորաբաժանումներում ստացվել են 26-ը, իսկ 1 դեպքով՝ ՁՊՎ ընդունված Գագիկ Պապյանը հետախուզվել է Բելառուսի Հանրապետության իրավասու մարմինների կողմից, որը ձերբակալվել է ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչության աշխատակիցների կողմից և նրա մոտ արձանագրված մարմնական վնասվածքների վերաբերյալ իրազեկումն ուղարկվել է ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն:

Նշված 26 իրազեկումներից՝ 18-ով նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը ՀՀ քր.դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 2-րդ կետերով մերժվել են, 3-ով՝ նախապատրաստված նյութերն ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն, 1-ով՝ Էրեբունու քննչական բաժնում ՀՀ քր.օր-ի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, որի նախաքննությունը դեռևս շարունակվում է, 2 դեպքով ներկայացված իրազեկումներով առանձին նյութեր չեն նախապատրաստվել, դրանց ընթացքը լուծվել է քրեական գործի շրջանակներում և որոշում է կայացվել ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

քրեական գործի հարուցումը մերժել՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ, 2-ով՝ տրված իրազեկումների ընթացքը դեռևս լուծված չէ:

12.06.2013թ-ից մինչև 24.10.2013թ. ընկած ժամանակահատվածում ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ են ընդունվել 254 ձերբակալված անձինք, որոնցից 98-ի մոտ հայտնաբերված և արձանագրված մարմնական վնասվածքների վերաբերյալ իրազեկումներ են տրվել վարույթն իրականացնող մարմիններին /Ձեր գրության մեջ նշված են թվով 251 ձերբակալված անձինք, որոնցից 101-ի մոտ են հայտնաբերվել և արձանագրվել մարմնական վնասվածքներ/:

Նկատի ունենալով, որ ՀՀ ոստիկանությունում գործող ՁՊՎ-ներից ստացված իրազեկումների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են եռամսյակային կարգով՝ հայտնվում է, որ 2013թ-ի 9 ամիսների ընթացքում ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ից ստացված իրազեկումների կապակցությամբ նախապատրաստվել և ՀՀ քր.դատ.օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կամ 2-րդ կետերով մերժվել են 113 նյութեր, 10 նյութ գտնվում են նախապատրաստման փուլում, 18 դեպքով նյութերի ընթացքը լուծվել է քրեական գործի շրջանակներում, 2 իրազեկումներ ուղարկվել են ՀՀ ՊՆ ՔՎ:

Պատասխանատվության ենթարկված պաշտոնատար անձանց վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունից տեղեկատվություն չի ստացվել, այդ կապակցությամբ կարող էք դիմել ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Միաժամանակ հայտնվում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը տրամադրվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

ՀՀ ոստիկանության շտաբ